ԵԴ1/0446/01/24
(ՀԿԴ/0228/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 մարտի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Արթուր Պողոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0446/01/24 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի մարտի 12-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի հոկտեմբերի 19-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Տիգրան Արմենի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 335-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 1-ին

մասով և Շանթ Աբնուսի Կարապետի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով թիվ 15103423 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 20-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0228/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի հոկտեմբերի 26-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել 2023 թվականի դեկտեմբերի 8-ին հիմնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարին 26-ին որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մարտի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0446/01/24 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մարտի 18-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ Տիգրան Արմենի Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 335-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա շահույթ ստանալու նպատակով իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի «Մետամֆետամին» տեսակի թմրամիջոց, ապօրինի ձեռք է բերել և պահել է ռազմամթերք, ինչպես նաև զբաղվել է փողերի լվացմամբ:*

Այսպես.

Տիգրան Արմենի Մուրադյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, այն է՝ չունենալով

բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու, այսինքն՝ թմրամիջոց պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու թույլտվություն, շահույթ ստանալու նպատակով որոշել է «Տելեգրամ» հավելվածի միջոցով զբաղվել առանձնապես խոշոր չափերի թմրանյութերի իրացմամբ: Իր հանցավոր նպատակն իրականացնելու նպատակով թմրանյութերի վաճառքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով հանցավոր խմբի կազմում ներգրավվել է նաև Վազգեն Դիլանյանին և քննությամբ ինքնությունները չպարզված անձանց:

Խմբի անդամների հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո՝ կատարել են համապատասխան դերաբաշխում, մասնավորապես՝ Տիգրան Մուրադյանը Շանթ Աբնուսի Կարապետից ձեռք բերելով առանձնապես խոշոր չափերի «Մեթամֆետամին» տեսակի թմրանյութերը, իսկ ինքնությունները չպարզված անձանցից ձեռք բերելով «Մարիխուանա» և «Էքստզի» տեսակի թմրամիջոցները, դրանք վաճառքն ավելի արդյունավետ կատարելու նպատակով բաժանել է մասերի, կշռել է, առանձնացրել է տարբեր փաթեթներում, որից հետո այդ փաթեթները տեղադրել է թաքստոցում, թաքստոցի կորդինատները ուղարկել է «Lyovik» տելեգրամյան էջի օգտատիրոջը, որից հետո վերջինիս կողմից ուղարկված անձինք վերցնելով հիշյալ փաթեթները, տեղադրել են Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում գտնվող թաքստոցներում, թաքստոցները լուսանկարել են և լուսանկարները կորդինատների հետ միասին ուղարկել են Տիգրան Մուրադյանին պատկանող «Սալվադոր», ինչպես նաև Վազգեն Դիլանյանին պատկանող և վերջինիս կողմից օգտագործվող «Buffalo42» տելեգրամյան էջերերին: Դրանից հետո Վազգեն Դիլանյանը օգտագործելով նաև «Սալվադոր» տելեգրամյան էջը, տվյալ լուսանկարները ձևափոխել է, լուսանկարների վրա տեղադրել է դրանց գտնվելու կորդինատները և զբաղվել է կայքէջի գովազդի ու թմրամիջոցների վաճառքով՝ հաճախորդներ հավաքելով, իսկ արդեն իսկ հավաքված հաճախորդներին ուղղարկելով թմրամիջոցների գտնվելու պահոցների լուսանկարները:

Հետագայում իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերի՝ 1,48 գրամ քաշով (0.49, 0.53, 0.41) «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց է հայտնաբերվել

06.01.2023թ-ի ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքում Տիգրան Մուրադյանի անձնական խուզարկությամբ, նույն օրը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է 0.08 գրամ հաստատուն քաշով «Մեթամֆետամին տեսակի թմրանյութ, առանձնապես խոշոր չափերի 6.705 գրամ հաստատուն քաշով (0.13 գրամ, 0.1 գրամ, 0.47 գրամ, 0.51 գրամ և 4.96 գրամ, 0.016 գրամ, 0.153 գրամ, 0.041 գրամ, 0.161 գրամ, 0.164 գրամ) «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցները, 1.87 գրամ հաստատուն քաշով (0.8 գրամ, 0.8 գրամ և 0.27 գրամ) «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը, 0.33 գրամ քաշով «Հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոը, մեկ հատ մկրատ, սև գույնի ժապավենը, գրիչներ, ինչպես նաև թմրանյութի հետքեր պարունակող տարաները հայտնաբերվել է 09.01.2022թ. վերջինիս կողմից շահագործվող «Ֆորդ Ֆոկուս» մակնիշի 37 CR 716 ավտոմեքենայի խուզարկությամբ, առանձնապես խոշոր չափերի ընդհանուր 1.81 գրամ քաշով՝ (0.26 գրամ, 0.21 գրամ, 0.16 գրամ, 0.15 գրամ, 0.14 գրամ, 0.2 գրամ, 0.2 գրամ, 0.19 գրամ, 0.16 գրամ, 0.14 գրամ) «Մեթամֆետամին» տեսակի թմրանյութերը հայտնաբերվել է 2023թ. հունվարի 09-ին կատարված դեպքի վայրերի զննություններով, իսկ 14.01.2023թ. Տիգրան Մուրադյանի կողմից վարձակալած ավտոտնակում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է առանձնապես խոշոր չափերի՝ 2,41 գրամ հաստատուն քաշով (0,5 գրամ, 0,48 գրամ, 0,46 գրամ, 0,45 գրամ, 0,52 գրամ) «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, խոշոր չափերի ընդհանուր՝ 30.52 գրամ (1.83 գրամ, 1.78 գրամ, 1.76 գրամ, 7.8 գրամ, 2.59 գրամ, 1.82 գրամ, 1.75 գրամ, 1.38 գրամ, 1.62 գրամ, 1.91 գրամ, 5.75 գրամ, 0.84 գրամ, 0.81 գրամ, 0.69 գրամ, 0.84 գրամ, 0.85 գրամ, 0.83 գրամ, 0.83 գրամ, 0.08 գրամ, 0.81 գրամ, 0.11 գրամ, 0.14 գրամ) «Մարիխուանա» տեսակի թմրանյութերը ինչպես նաև թմրանյութի հետքեր պարունակող էլեկտրանային կշեռքներ, կպչուն ժապավեններ և թմրամիջոցի հետքեր պարունակող պլաստամասե և ապակե ամաններ, զիպ փաթեթներ, ռետինե խողովակներ, մկրատներ, գրիչներ, ռետինե ձեռնոցներ:

(…)

Բացի այդ, Տիգրան Մուրադյանը 2022 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2023 թվականի հունվարի 5-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հանցավոր ճանապարհով՝ թմրամիջոցների իրացումից ստացված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, դրանց իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով «Տելեգրամ» համացանցային հավելվածի միջոցով իրացված թմրամիջոցների գումարները հաճախորդներից ստացել է կրիպտորաժույթի փոխարինված վիճակում իրեն պատկանող «XOUMOPGLyMexHu1dopEbzUS5fnsX4ivHq5», «XrdgJwwkaMt4zNLG2tJFdHkDzP4LepvJp1»,«XditDJqmeTVP6ggTGz7cpmEVCG359TKFWx»,«XiPasgLNjhGR9ZrCAEYY79EgdrFmjkHRyb»,«Xg1RrZGC2H6tmBHyNSqpTXN8GL7YYQbJ9U»,«XyJ5V9irUXCVy2ovK25nizN6Q4g6th9vGQ»,«XryteR67nwuc4NHmJUouisEy47BHt581qX»,«XiMyK9uzeG16pjbbs54R3rDJbGzdpD5Naj»,«fqhW8bx6poldzyec6dbksttptruay2phz»,«XoPNf66dSn4TAWEHRp77Liyu6GSVCHRNKX» կրիպտոարժույթի էլեկտրոնային հաշվեհամարներին փոխանցելով, որից հետո հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարների ծագման փաստը քողարկելու և դրանց օրինական տեսք տալու նպատակով 2022 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2023թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Տիգրան Մուրադյանն իրեն պատկանող հիշյալ կրիպտոհաշիվներից կրիպտոարժույթ է փոխանցել կրիպտոարժույթի փոխանակում իրականացնող Էդուարդ Ռուբենի Ավետիսյանի էլեկտրոնային կրիպտո դրամապանակին, ով կրիպտուարժույթը փոխարինելով դրամի ընդհանուր 474.400 ՀՀ դրամ գումար փոխանցել է Տիգրան Մուրադյանին պատկանող «Ամերիա բանկ» ՓԲ ընկերությանը պատկանող 4083060010756092 բանկային հաշվին, իսկ 1.191 ԱՄՆ դոլար փոխանցել է Տիգրան Մուրադյանին պատկանող նույն բանկին պատկանող 4083060010206676 բանկային հաշվին: 2022թ. նոյեմբերի 28-ից մինչև 2023թ. հունվարի 05-ին ընկած ժամանակահատվածում կրիպտորաժույթի փոխանակում իրականացնող Գևորգ Գառնիկի Թամազյանի միջոցով նույն եղանակով կրպտորաժույթ է փոխարինել 577.346 ՀՀ դրամի և

փոխանցել իրեն պատկանող «Ամերիա բանկ» ՓԲ ընկերությանը պատկանող 4083060010756092 բանկային հաշվին:

(…)

Բացի այդ, Տիգրան Արմենի Մուրադյանը, քննությամբ չպարզված օրը, հանգամանքներում և անձից ապօրինի կերպով ձեռք է բերել ռազմամթերք հանդիսացող գործարանային արտադրության 7.62 մմ /7.62x39/ տրամաչափի թվով 3 հատ փամփուշտներ, որոնք էլ հայտնաբերվել է իր բնակության վայրում՝ Երևան քաղաքի Ամիրյան փողոցի 12-րդ շենքի 135-րդ բնակարանում 2023թ. հունվարի 09-ին կատարված խուզարկությամբ (…) »[1]:

4.1. 2023 թվականի մարտի 28-ի որոշմամբ Շանթ Աբնուսի Կարապետի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով, ինքնությունը դեռևս չպարզված անձից և ժամանակահատվածում, ապօրինի ձեռք է բերել չպարզված քանակության «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, որն քննությամբ չպարզված օրվանից մինչև 2023 թվականի հունվարի 04-ը իրացրել է Տիգրան Արմենի Մուրադյանին:*

Այսպես.

Շանթ Աբնուսի Կարապետը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու, այսինքն՝ թմրամիջոց պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու թույլտվություն, քննությամբ չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում, անհայտ անձից շահադիտական դրդումներով իրացնելու նպատակով ձեռք է բերել անհայտ քանակությամբ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, որը քննությամբ չպարզված օրվանից մինչև 2023 թվականի հունվարի 04-ն ընկած ժամանակահատվածում՝ դեռևս չպարզված տարբեր օրերի, իրացրել է

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթ 230-233:

Տիգրան Արմենի Մուրադյանին, ինչի դիմաց ընկերոջ՝ Մենուաս Վիգենի Բաբախանլուին պատկանող «Այդի» բանկի թիվ «9051140200267923» բանկային քարտի վրա ստացել է շահադիտական դրդումներով իրացման՝ վաճառքի համար նախատեսված գումարները (…)»[2]:

5. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարին 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Դ]իտարկելով մեղադրյալ Տիգրան Մուրադյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագիրը, հաշվի առնելով, որ վերջինիս նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, այն է՝ Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), նաև այն, որ սույն քրեական գործով ըստ էության անցում կատարվել է հիմնական դատաքննության փուլ, սակայն դեռևս այդ փուլին բնորոշ որևէ գործողություն չի կատարվել, կողմերը նույնիսկ դեռևս հանդես չեն եկել բացման խոսքով, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0228/01/23 քրեական վարույթն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հետևաբար անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0228/01/23 քրեական վարույթը փոխանցել ըստ ընդդատության (…)»*[3]:

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 5, թերթ 70-71:
[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 195-201:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մարտի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ քրեական գործով կողմերը և հատկապես մեղադրյալները, ովքեր իրենց ներկայացված քրեական մեղադրանքի առնչությամբ ունեն բոլոր պահանջների պահպանմամբ իրականացվող արդար դատաքննության իրավունք, չեն առարկել գործի քննությունը ՀՀ Հակակոռուպցիոն դատարանում շարունակվելու դեմ, ինչը Դատարանի գնահատմամբ առաջնային պայման պետք է հանդիսանար գործի քննությունը նույն դատարանում շարունակելու համար: Ինչ վերաբերվում է հանրային մեղադրողին, ապա Դատարանն արձանագրում է, որ վերջինս ոչ թե առարկել է գործի քննությունը ՀՀ Հակակոռուպցիոն դատարանում շարունակվելու դեմ, այլ ընդամենն օրենսդրական փոփոխությունների ուժով գտել է, որ այն այլևս ենթակա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի քննությանը:*

Բացի այդ, ընդդատության կանոնների վերլուծության համար Դատարանը հարկ է համարում հիշատակել նաև ՀՀ Հակակոռուպցիոն դատարանի գործելու պահից առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերի (վարույթների) վերաբաշխման վերաբերյալ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021թ. ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 24-րդ կետով սահմանված կարգը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ: Այսինքն, թեև կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերի ընդդատությունը փոփոխվել էր, սակայն դատախազներից ավելի քրեական գործերի քննությունը որոշվեց շարունակվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում այն պատճառով, որ անցում էր

կատարվել դատաքննության փուլ, որպիսի իրավիճակ առկա է նաև տվյալ քրեական վարույթով:

(…)

Ելնելով վերոգրյալներից, Դատարանը գտնում է, որ հմ.ԵԴ1/0446/01/24 (նախաքննական վարույթի համար՝ 15103423) քրեական գործի քննությունն, ըստ մեղադրանքի՝ Շանթ Արնուսի Կարապետի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Տիգրան Արմենի Մուրադյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 335-րդ հոդվածի 1-ին մասով և 296-րդ հոդվածի 1-ին մասով, պետք է շարունակվի ՀՀ Հակակոռուպցիոն դատարանում, քանի որ օրենսդրական փոփոխությունների ուժով վրա հասած ընդդատության կանոնների փոփոխությունը կատարվել է դատարանի կողմից հիմնական դատաքննություններ նշանակելուց հետո, իսկ կողմերն ըստ էության չեն առարկել գործի քննությունը ՀՀ Հակակոռուպցիոն դատարանում շարունակվելու դեմ (…)»[4]*:*

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0446/01/24 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի*

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 210-211:

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան*

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

Նույն օրենսգրքի 323-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական դատալսումներն սկսվում են սույն օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով դատական նիստը բացելով և դատաքննության մասնակիցների վերաբերյալ հաղորդումը լսելով: Այնուհետև նախագահողը կարգադրում է դատական նիստի ներկայացած վկաներին մինչև նրանց հարցաքննությունը լքել դահլիճը, իսկ*

դատական կարգադրիչներին հանձնարարում է միջոցներ ձեռնարկել, որ չհարցաքննված վկաները չհաղորդակցվեն արդեն հարցաքննված վկաների, ինչպես նաև դատական նիստերի դահլիճում գտնվող այլ անձանց հետ»:

12.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

1) ***«Հոդված 296. Փողերի լվացումը»*** *բառերը փոխարինել* ***«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝*** *իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով (…)»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի համաձայն՝ *«23. (…) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (…) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:*

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ»:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն*

դատարանի դատավորների միջև, եթե տվյալ գործերով անցում չի կատարվել դատաքննության փուլ»:

12.2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա): (...):*

3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

4. Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը»:

13. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16–ին ընդունված ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքն այլևս չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի և ընդգրկված չէ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում, հետևաբար դրա վերաբերյալ վարույթներն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Սակայն, կատարված փոփոխությամբ որևէ կարգավորում չի սահմանվել առ այն, թե արդյո՞ք այդ փոփոխությունը պետք է տարածվի Հակակոռուպցիոն դատարանում դատաքննության փուլում գտնվող նմանատիպ

վարույթների վրա, այլ կերպ՝ արդյո՞ք այդ վարույթները ենթակա են վերաբաշխման, թե ոչ:

Այդուհանդերձ, դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ այն գործերը, որոնցով **անցում է կատարվել դատաքննության փուլ, ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին:** Այսինքն, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով լուծում է տրվել համանման իրավահարաբերությանը, ըստ որի՝ դատաքննության փուլ անցում կատարված լինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող վարույթի փոխանցումը Հակակոռուպցիոն դատարան իրավաչափ չէ:

13.1. Հաշվի առնելով, որ ինչպես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն արգելում անալոգիայի կիրառումը, ինչպես նաև այն, որ տվյալ պարագայում անալոգիայի կիրառումն անձանց իրավունքները, ազատությունները չի սահմանափակում կամ նրանց համար նոր պարտականություն կամ պատասխանատվություն չի նախատեսում՝ գտնում ենք, որ Հակակոռուպցիոն դատարանների վարույթում գտնվող՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ

օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա վարույթների վերաբաշխման հարցը պետք է լուծվի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ: Այլ կերպ՝ այն վարույթները, որոնցով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել դատաքննության (հիմնական դատալսումների) փուլ, ենթակա չեն վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 8-ին կայացած դատական նիստի ընթացքում անցում է կատարել հիմնական դատալսումների փուլ[8]:

- Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մեղադրյալ Տիգրան Մուրադյանին նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Միաժամանակ արձանագրել է նաև, որ թեև սույն քրեական վարույթով ըստ էության անցում է կատարվել հիմնական դատալսումների փուլ, սակայն դեռևս այդ փուլին բնորոշ որևէ գործողություն չի կատարվել, կողմերը հանդես չեն եկել բացման խոսքով[9]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ քրեական գործի քննությունը պետք է շարունակվի Հակակոռուպցիոն դատարանում, քանի որ ընդդատության կանոնների փոփոխությունը կատարվել է Հակակոռուպցիոն դատարանի կողմից հիմնական

[8] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 59-65:
[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

դատալսումներ նշանակելուց հետո, իսկ կողմերն ըստ էության չեն առարկել գործի քննությունը Հակակոռուպցիոն դատարանում շարունակելու դեմ[10]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով նախատեսված իրավակարգավորումների լույսի ներքո, թիվ ԵԴ1/0446/01/24 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթը ենթակա չէր վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ սույն վարույթով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել հիմնական դատալսումների փուլ:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0446/01/24 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, հիմնավոր է:

17. Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն դատարանի վկայակոչած այն դատողությունը, որ թեև սույն քրեական վարույթով ըստ էության անցում է կատարվել հիմնական դատալսումների փուլ, սակայն այդ փուլին բնորոշ որևէ գործողություն չի կատարվել, ապա այն ընդունելի չէ և չի բխում սույն գործի փաստական հանգամանքներից: Մասնավորապես, սույն վարույթի դատական նիստի համակարգչային արձանագրման կրիչի ուսումնասիրությունից երևում է, որ Հակակոռուպցիոն դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի հիման վրա սկսել է հիմնական դատալսումները և իրականացրել է այդ փուլում կատարման ենթակա գործողություններ՝ այն է նույն օրենսգրքի 266-րդ

[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նախագահողը բացել է դատական նիստը և լսել դատաքննության մասնակիցների վերաբերյալ հաղորդումը[11]:

18. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև, ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունից, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0446/01/24 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Տիգրան Արմենի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 335-րդ հոդվածի 1-ին մասով, 296-րդ հոդվածի 1-ին մասով և Շանթ Աբնուսի Կարապետի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով թիվ ԵԴ1/0446/01/24 (ՀԿԴ/0228/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

[11] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, դատական նիստի արձանագրություն, թերթ 65: